

7 ბ. Աղսես, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 114-119; Ս. Տ. Երեմյան, Եղվ. աղյ., էջ 90-94; Գ. Ա. Մելիկիշվիლი, Ուր-Արարտ, Թბილის, 1954, էջ 280-281; Ս. Մ. Դյակով, История Минин, էջ 234-236;

ման: Ասորեստանցի հետախույզները Սարգոն II-ին հաղորդում էին (մ. թ. ա. 722—705 թթ.). «Ուրարտական թագավորը հենց որ գնաց Գամիր երկրի դեմ, նրա զորքը ամբողջությամբ չախչախվեց: Նա, ինքը, և նրա մարզերի կառավարիչները իրենց պորքով պահ են մտել...»: Այնուհետև. «Կիմմերացին այս, դուրս եկավ Մաննա երկրից և Ուրարտու մուտք գործեց... պուլիացիների և սուրիացիների առթիվ ամբողջ Ուրարտու երկիրը սարսափում է»⁸:

Կիմերների հետ միասին ուրարտացիների դեմ հանդես եկած վերջին երկու ցեղերից մեկը՝ քսու-ացիները, հավանաբար, բնակիչներն էին ուրարտական արձանագրություններում Puluadi կոչված երկրի: Դա երևում է նախ նրանից, որ բերված հատվածներից երկրորդի մեջ մատնանշվում է ռազմական գործողությունների հարավ-արևելյան (ուրարտու-մանայական սահմանամերձ շրջաններում) թատերաբեմը: Իսկ, ինչպես պարզվում է ուրարտական արձանագրություններից⁹, Փուլուադի երկիրը գտնվում էր հենց այս կողմերում՝ համապատասխանելով հին Ատրպատականի Կատիշք աղգագավառին¹⁰: Ըստ այսմ, Փուլուադի երկրի հարավային սահմանը կաղմելու էր Քուշաթաղ (այժմ՝ Սաբալանի) լեռնաշղթան, իսկ հյուսիսայինը՝ Պարսպատունիքի (այժմ՝ Ղարադաղի) լեռները և նրանց շարունակությունը մինչև Թալիշ-Իլիանի լեռնաշղթան: Այստեղ, հետագա Կատիշք աղգագավառի հյուսիսային սահմանագլխին էին գտնվում Արևելյան Անդրկովկասից Ատրպատական տանող երկու նշանավոր լեռնանցքները: Մեկը «Դրունք Հայոց» ('Արւեստոն քոյաւոյ, «Արմինիյան անցք») լեռնանցքն էր՝ Կատիշքի և Պարսպատունիքի միջև¹¹, մյուսը՝ «Կասպիական դրունք» (այժմ՝ Սալավաթի) լեռնանցքը՝ Կատիշքի և Կասպքի (Փայտակարան նահանգ) միջև¹²:

Նկատի առնելով Կատիշք աղգագավառի լեռնանցքամերձ դիրքը, նրա հին Pulu-adi անվան, ինչպես նաև քսու-ացի ցեղանվան (ավելի ձիշտ՝ էթնիկոնի) հիմքում ընկած քսու- արմատը կարելի է ծագումնաբանորեն առնչել հայերեն փող (սեռ. փողոյ) բառին¹³, Հայերեն բառը Գ. Բ. Զահուկյանը համեմատում է հունարեն πύλος («դուռ, դարպաս, մուտք, անցք»), պելասգերեն φύλαξ, φύλαξ ($\leq$ հ. *pwl-okʷ(o)-s¹⁴ «պահապան, դռնապան») և թրակիերեն -φύλαξ (դուռ)՝ Τρι-φύλαξ «եռադուռ» բերդանվան մեջ՝ բառերի հետ¹⁵:

⁸ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, էջ 322:

⁹ Г. А. Меликишвили, Новая урартская надпись из Иранского Азербайджана, «Вестник древней истории», 1960, № 3, էջ 3—11; Н. В. Арутюнян, Бнайинили (Урарту), Ереван, 1970, էջ 256—257: «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, էջ 315, 370:

¹⁰ Տե՛ս Ս. Ն. Երեմյան, «Ուրարտու պետությունը և հարևան երկրները մ. թ. ա. VIII—VII դդ.» քարտեզը, «ՀՍՍՌ ատլաս», Երևան—Մոսկվա, 1961, էջ 102: Նույնի՝ «Ուրարտու պետությունը (մ. թ. ա. 870—590 թթ.)» քարտեզը, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I:

¹¹ Ս. Ն. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 50:

¹² Նույն տեղում, էջ 50, 58:

¹³ Հայերեն փող բառն ունի նաև «նեղ անցք, նրբանցք, միջանցք» իմաստները: Հմմտ. այս նույն արմատից կաղմված փողոց և փողան բառերը (տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. IV, Երևան, 1945, էջ 512—513):

¹⁴ В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, էջ 94:

¹⁵ Գ. Բ. Զահուկյան, Հայերեն և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 67, 93, ծան. 39:

Pulu-adi երկրանվան «լեռնանցր (երկիր)»¹⁶ ստուգաբանության ճշմարտացիության մասին է խոսում ինչպես այն կրող օբյեկտի (հետագա կատիչք ազգագավառի) լեռանցքամերձ դիրքը, այնպես էլ տարբեր լեզվական միջավայրերում նույնիմաստ տեղանունների գոյության փաստը¹⁷: Ինչ վերաբերում է «փուլուացիներին», ապա նրանք այդպես էին կոչվելու իրենց հսկողության տակ եղած վերոհիշյալ լեռնանցքների (pulu-ների) պատճառով: Այսպիսով, Pulu-adi երկրանվան և pulu-ացի էթնիկոնի առաջին բաղադրիչների նույնությունը ևս հիմք է տալիս ենթադրելու, որ Փուլուադին եղել է կիմերներին դաշնակից Քրակա-կիմերական ցեղերից մեկի՝ «փուլուացիների» երկիրը:

Փուլուադի երկրից հյուսիս և արևելք, մինչև Կուրի ստորին հոսանքը ձգվող շրջանները, ըստ երևույթին, պատկանում էին կիմերների արևելաանդրկովկասյան հատվածին: Այստեղ կային թե՛ ձմեռային բաց արոտավայրեր (հատկապես Միլի և Մուղանի տափաստաններում), թե՛ ամառային փարթամ կանաչով պատված դով լեռնալանջեր (Թալիշի և Ղարադադի լեռներում): Նկատի առնենք, որ անասուններին ձմեռնարոտի (հովտային) և ամառնարոտի (լեռնային) վայրերով ապահովելն անհրաժեշտ պայման էր ինչպես կիմերների, այնպես էլ Կովկասում, Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայում, Բրանական սարահարթում (և բնակլիմայական նույնպիսի պայմաններ ունեցող ուրիշ երկրներում) հաստատված մյուս վաշկատուն ցնդերի տնտեսության զարգացման համար: Ըստ երևույթին, կիմեր անասնապահները իրենց երամակներով ու հոտերով Միլի և Մուղանի տափաստաններում ձմեռելուց հետո, զարնանք Ղարասու գետի աջափնյակով (նրա հոսանքն ի վեր) կամաց-կամաց բարձրանում էին այժմյան Արդաբիլի շրջակայքի լեռները, որտեղ ամառն անցկացնելուց հետո նույն ճանապարհով վերադառնում էին ձմեռանոց: Այս ճանապարհի¹⁸ երկու ծայրակետերում՝ գտնվող բնակավայրերի անունների ղույզ տարբերակներում՝ Փայտակա-բան = Բայլական և Արտալետ = Արդաբիլ, ինչպես ստորև կտեսնենք, առկա է կիմերերենից եկող է = լ հնչյունական համապատասխանությունը: Իսկ սա խոսում է այս կողմերում կիմերական բնակչության երբեմնի գոյության մասին¹⁹:

¹⁶ Երկրանվան -adi բաղադրիչը, թերևս, ծագումնաբանական աղբյուր ունի հայերեն -տա տեղանվանակերտ վերջածանցի հետ (հմտ. Հադրատ, Ուրբուտ, Տամբատ և այլն):

¹⁷ Հմտ. հայ. կապան և Կապան, պարս. دربان (darband «լեռնանցք» < dar «դուռ» + band «կապ») և Darband («Դերբենդ»), արաբ. البَاب/al-bāb «դուռ» և Al-bāb («Դերբենդի և նրա զավառի արարական անունը»):

¹⁸ Ղարասու գետի աջափնյակով ընթացող Արդաբիլ-Բայլական ճանապարհը, ինչպես պարզվում է արաբ մատենագիրների հաղորդումներից, հյուսիսային Առապատականից Արևելքյան Անդրկովկաս տանող ամենաբանուկ ճանապարհն էր (տե՛ս Н. Караулов. Сборник сведений арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXIX, Тифлис, 1901, էջ 29-31, вып. XXXII, 1902, էջ 9-13, 25-27, вып. XXXVIII, 1907, էջ 17, 101: Huddud al-'Alam, The Regions of the World, Translated and explained by V. Minorsky, London, 1937, էջ 390-403):

¹⁹ Որ Մուղանում ևս ժամանակին պետք է գոյություն ունենար կիմերական բնակչություն, հուշում է նրա զրաված աշխարհագրական դիրքը (Բայլականի և Արդաբիլի միջև): Հնարավոր է, որ Մուղանում կիմերների բնակության հիշատակն են պահել տեղի *Խարաուդաշտ (Գավրաբյան դաշտ), *Խարաու բազին (Մաթթաբ ձուռ) և Խարաուվան (Ջաբրա-

Արևելյան Անդրկովկասում ավելի ուշ ստեղծված սկյութական Աշգուղ («Աշքենաղ») ցեղամիությունը հարավում ընդգրկում էր խնդրո առարկա շրջանները²⁰ դրանց թրակա-կիմերական բնակչությամբ հանդերձ։ Այս տեսանկյունից նայելիս է հասկանալի դառնում, թե ինչու հին հրեաները սկյութների էպոնիմ-նախնի Աշքենագին (հայ. Ասքանաղ) համարում էին կիմերների էպոնիմ-նախնի Գամերի (Գոմեր) որդին²¹։ Իսկապես էլ, նոր նվաճողները՝ սկյութները, ի վիճակի չէին Արևելյան Անդրկովկասից և հյուսիսային Ատրպատականից լրիվ դուրս մղելու թրակա-կիմերական ցեղերին և չէին կարող անմիջապես ստեղծել իրենց ցեղամիությունը։ Դրա ստեղծմանը նախորդելու էր մի ժամանակաշրջան, երբ սկյութները ձգտելու էին լեզու գտնել ավելի վաղ ալստեղ հաստատված ցեղերի գոնե մի մասի հետ (չէ՞ որ սրանց հսկողության տակ էին գտնվում Արևելյան Անդրկովկասից Ատրպատական տանող ճանապարհները՝ լեռնանցքներով հանդերձ)։ Փոխադարձ զիջողությունը հանգեցնելու էր տեղի թրակա-կիմերական ցեղերի մի մասի (դրանց թվում նաև բուն կիմերների առանձին հատվածների)՝ եկվոր սկյութա-սակյան ցեղերի հետ հավասար հիմունքներով ընդգրկմանը սկյութական ցեղերից մեկի գլխավորած նորաստեղծ Աշգուղ ցեղամիության մեջ²²։

Վերը ասվածները հիմք են տալիս ենթադրելու, որ սկյութական Աշգուղ ցեղամիության ստեղծումից հետո ևս տեղի թրակա-կիմերական ցեղերի (դրանց թվում նաև բուն կիմերների) մի մասն էր միայն հեռացել արևմուտք։ Նրանց մի ստվար մասը մնացել էր տեղում և, ի տարբերություն Տուգղամմեի (678—653 թթ. մ. թ. ա.) գլխավորությամբ արևմուտք հեռացած իրենց ցեղակիցների, ընդունելով սկյութական ցեղերից մեկի գերիշխանությունը՝ համագործակցել էր նրա հետ։

Արևելյան Անդրկովկասի հարավում և Ատրպատականի հյուսիսում թրակա-կիմերական էթնիկական տարրի հետագա գոյության մասին կարելի է դատել նաև, ելնելով այս կողմերի ավելի ուշ ժամանակներից հայտնի մի քանի տեղանուններում ու աշխարհագրական անվանումներում դրսևորվող

վան) տեղանունները (տե՛ս Ս. Տ. Երևմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 46։ Ի ու լ յ ն ի՝ «Հայաստանը և հարևան երկրները 855—953 թթ.» քարտեզը։ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. III, Երևան, 1976)։ Բերված հատուկ անունների *gaba- բաղադրիչները, ըստ Երևույթին, ներկայացնում են կիմերների gamer զեղանվան b-ով տարբերակները։ Տվյալ դեպքում (*gabar = gamer) մենք նկատի ունենք թրակերենին, ինչպես նաև փոյուգերենին, բնորոշ b=m հնչյունափոխությունը (տե՛ս Դ. Децев, Характеристика на тракийския език, София, 1952, էջ 23), որը կարող էր գործել նաև խնդրո առարկա շրջանների թրակա-կիմերական ցեղերի միջավայրում։ Հմմտ. նաև հայկ. Ջերմ = Zerbis գետանունը, Armar-ili = Արբեռ-անի և Գարդման = Գարդաբանի զավառանունները (տե՛ս Ս. Տ. Երևմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 46, 78)։

20 И. М. Дьяконов, История Мидии, էջ 281։

21 Աստվածաշունչ, Մեռնդը, գլ. Ա, 3 և Ա Մնաց., գլ. Ա, 6—7։

22 Աշգուղ ցեղամիության ստեղծմանը նախորդած ժամանակաշրջանում սկյութների և կիմերների (մի մասի)՝ համագործակցության և նրանց կողմից ապստամբ մարերին ցույց տրված աջակցության մասին են վկայում մ. թ. ա. 673 թ. դեպքերի մասին պատմող ասորեստանյան վավերագրերը։ Դրանցից մեկում մար առաջնորդ Վ...Մամիտիարշուին սուրհանդակ հղելու մասին հարցման մեջ (Кп. 25) նրանք (այսինքն՝ սկյութները--Ս. Պ.) հիշատակվում են «կիմերների» հետ միասին» (И. М. Дьяконов, История Мидии, էջ 272, հմմտ. նաև ն. Ադունց, նշվ. աշխ., էջ 133—134)։

լիզվական առանձին օրինաչափություններից: Նախ, կիմերերենից եկող հնչյունական մի համապատասխանության մասին: Կիմերական առաջնորդներից մեկի՝ վերահիշյալ Տուգդամմեի անունը մեղ հասել է երկու տարբերակով. ալկադ. Tugdammī = հուն. Λυγδαμῖς (= Lugdamis): Ինչպես տեսնում ենք, ալկադական տարբերակի նախաձայն Դ-ի դիմաց հունարեն տարբերակում Լ է: Որտեղից է գալիս այս տարբերությունը: Հարցին տրված երեք հավանական սլատասխանները (ինչ-ինչ դիտողություններով հանդերձ) հակիրճ կերպով բերված են Ի. Մ. Դյակոնովի հետևյալ տողերում. «Այստեղ ննարավոր է տալ երեք բացատրություն: 1) Lugdamis-ը հին վրիպակ է Dugdammis-ի փոխարեն (Ա. փոխանակ Δ-ի): Սակայն սա կնշանակեր, թե Լիզդամիսի բոլոր անտիկ հիշատակությունները գալիս են մի սկզբնաղբյուրից, որը դժվար է պնդել հատկապես, օրինակ, Ստրաբոնի և Կալիմաքոսի վերաբերյալ: 2) Lugdamis-ը հելլենականացված ձևն է կիմերական անծանոթ անվան: Իսկապես էլ, կիմեր Լիզդամիսից բացի անտիկ հեղինակների հաղորդումներից հայտնի են նաև այդ անունը կրած ուրիշ անձնավորություններ, սակայն այդ անունը հունական ստուգաբանություն չունի և, բոլոր երկվությից, փոքրասիական է: 3) Lugdamis-ի Լ-ն և Tugdammī-ի Է-ն, հավանաբար, փոքրասիական առանձին լեզուներում տարածված (ինչը ցույց են տալիս մի քանի ուրիշ տվյալներն ևս): 1) հնչյունի (խուլ «լ» կամ կողքային «տ») տարբեր վերարտադրումներ են: Այդպիսին է ալկադ. Վ. Վ. Ստրուվեի տեսակետը: Այս դեպքում այդ անունը պետք է համարել կամ փոքրասիական կամ հաղորդված փոքրասիական լեզուների միջնորդությամբ»²³:

Սակայն անհամոզիչ է ոչ միայն Λυγδαμῖς-ը *Δυγδαμῖς-ի վրիպակն համարող, այլև մյուս երկու կարծիքները: Բանն այն է, որ Տուգդամմեն (Լիզդամիսը) իր կիմերների հետ միասին Փոքր Ասիա էր գաղթել ուրարտու-մանաչական սահմանամերձ շրջաններից²⁴, այսինքն՝ այնպիսի հեռավոր վայրերից, որոնք իրենց աշխարհագրական դիրքի բերումով չէին կարող գտնվել փոքրասիական ազդեցության ոլորտում: Բնականաբար, արևելքից Փոքր Ասիա անցած կիմեր առաջնորդի անունը փոքրասիական լինել չէր կարող²⁵: Պետք է անընդունելի համարել նաև այս անձնանվան հունական տարբերակում ալկադականի Լ-ի դիմաց Է-ի առկայությունը փոքրասիական լեզուների միջնորդությամբ բացատրող կարծիքը, քանի որ հնչյունական նույնպիսի համապատասխանության ենթ հանդիպում նաև կիմերների բնակության շրջան-

²³ II. M. Дьяконов, История Мидии, էջ 240, ծան. 4:

²⁴ Ս. Ս. Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, էջ 108—109: Տուգդամմեի արևելքի լինելու իրողությունը բխում է նաև նրա «Σαλα-γῖς և Gutium-ի թագավոր» հորջորջումից. քանի որ այս երկու տերմիններն էլ մատնացույց են անում Հայկական լեռնաշխարհից արևելք և հարավ-արևելք ընկած շրջանները (տես A. M. Хазанов, Социальная история скифов, М. 1975, էջ 220):

²⁵ Ուրիշ է կիմերական Λυγδαμῖς-ի և նրան հիշեցնող փոքրասիական հատուկ անունների առկայության հարցը: Վերջիններս կարող են ունենալ մասամբ թրակա-պելասգյան, մասամբ էլ թրակա-կիմերական ծագում: Հայտնի է, որ կիմերներն ու տրերները Բալկանների վրայով Փոքր Ասիա էին լիափանցել մ. թ. ա. V—VIII դդ. թվագրվող մի քանի ալիքներով (տես Strabo, I, 1, 10, III, 2, 12, IX, 2, 5; Т. Д. Златковская, К вопросу об этногенезе фракийских племен, «Советская этнография», 1961, № 6, էջ 38):

ներից ամենաարևելյանի (Արաքսի ստորին հոսանքի շրջակայքում) տեղանուններից երկուսի գույգ տարբերակներում. Փայտակարան = Բայլական և Արտաւէտ = Արդաբիլ: Ինչպես տեսնում ենք, սրանց առաջին տարբերակների է-երի դիմաց (հմմտ. ակկադ. Tugdammi) երկրորդներն ունեն 1-եր (հմմտ. հուն. Λυγδαλις):

Փայտակարան-ը հայկական տարբերակն է արաբա-պարսկական աղբյուրներում بایلاکان, Baylakān կոչված քաղաքի անվան²⁶: Վերջինս հնթադրում է նախնական *Phaylakārān տարբերակը, որը արաբերենում pū (փ) հնչյունի բացակայության պատճառով արտասանվել է *Baylakaran (հմմտ. Փայլա, Փարխու, Փասվե տեղանունների արաբական Բայլաս, Բարխու, Բասվա ձևերը)²⁷, ապա՝ կրճատ Baylakan ձևով: Նույն կերպ հայկական Արտաւէտ-ի կողքին արաբա-պարսկական اردابیل, Ardabīl ձևը ենթադրում է նախնական *Artauēl տարբերակի գոյությունը (հմմտ. Ատրպատականի հայություն ալսոր էլ գործածած Արտավիլ = միջին պարս. Artavil ձևը), որը հետագայում, պարսկերենում տեղի ունեցած t > d և u > b օրինաչափ անցումների շնորհիվ, ստացել է ներկա Ardabīl տեսքը: Ուրեմն, Phaytakaran = *Phaylakārān, իսկ Artauēt = *Artauēl²⁸:

Այսպիսով, միևնույն անձնանվան Tugdammi = Λυγδαλις տարբերակների հետ միասին, միևնույն տեղանունների Փայտակարան = Baylakan և Արտաւէտ = Ardabīl (ինչպես նաև Կալառզենա Կալառզենա-ք = Շաղաղոմ-ք) տարբերակները գալիս են ապացուցելու, որ t = l հնչյունական համապատասխանության ակունքները գտնվում են կիմերերենում²⁹, ընդ որում նաև Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում մշտական բնակության անցած կիմերների առանձին հատվածների լեզուներում:

²⁶ Փայտակարան և Բայլական քաղաքների նույնության վերաբերյալ տե՛ս, օրինակ, V. Minorsky, Hudūd al-'Ālam, էջ 397—398: Հ. Մանանդյան, Քննական տեսություն այլ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Նրեան, 1957, էջ 311, հատ. Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 149: E. A. Пахомов, Пантакаран—Байлакан—Орен-Кала, «Труды Азербайджанской (Оренкалинской) археологической экспедиции», т. I, М.—Л., 1959, էջ 15—32: Ս. Տ. Երևմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 88: Փայտակարան քաղաքի Արաքսի ձախափնյակում (և ոչ թե աջափնյակում) գտնվելու փաստն արձանագրել է, օրինակ, Խորենացին, երբ Փայտակարան քաղաքի վերակացուներին կոչում է հյուսիս-արևելյան կողմերի գործակալներ (Խորենացի, Գ, գ):

²⁷ Տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Բ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 34, 38, 39:

²⁸ Հնչյունական այս համապատասխանությունն աուկա է նաև Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքի տեղանուններից երկուսի գույգ տարբերակներում. Կալառզենա = Calarzene, Շաղաղոմ-ք = Շաղաղոմ-ք (տե՛ս Г. А. Меллишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959, էջ 114: Ս. Տ. Երևմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 59, 73): Իսկ լեռնաշխարհի այս մասով էր Փոքր Ասիա անցել հյուսիսի կիմերների մեկ ուրիշ հատվածը (Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, էջ 11—13):

²⁹ Ինչպես ենթադրվում է, դա կարող էր լինել հետևանքը կիմերերենին հատուկ կամ «խուլ» — «կոդալի» տ, կամ նախնական *dl հնչյունի երկտիպ արտացոլման (տե՛ս Н. М. Дьяконов, История Минии, էջ 240, ծան. 4: Գ. Բ. Ջահուկյան, Կիմերները և կիմերերենի պրոբլեմը արդի գիտության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 4, էջ 77):

Այս վերջին տեսակետից հետաքրքրական է, որ միևնույն լեզվական օրինաչափությունն արձանագրած տեղանվանակիր օբյեկտների ավանդական հիմնադիրները՝ Բայլական և Արդաբիլ քաղաքների էպոնիմները, համարվել են հարազատ եղբայրներ: Արաք մատենագիրների մշակած տեղական ավանդազրույցների համաձայն, Բայլականի «...հիմնադրողն է եղել Յունանի որդի, Լանտայի որդի, Արմանի որդի Բայլականը», իսկ Արդաբիլ «...քաղաքն իր անունը առել է Յունանի որդի, Լանթայի որդի, Արմինիի որդի՝ Արդաբիլից»³⁰:

Արաքսի ստորին հոսանքի շրջանում թրակա-կիմերական էթնիկական տարրի ժամանակին ունեցած բնակության տեսակետից ուշադրության են արժանի տեղի հին գետանունները ևս: Դետանուններն առհասարակ աչքի են ընկնում իրենց համեմատական՝ «ուղղակի» և «թարգմանական» կայունությունով: «Ուղղակի» կայունության դրսևորման ժամանակ հին գետանունը պահպանվում է՝ նոր (եկվոր) բնակչության կողմից առանձին դեպքերում կատարած աղավաղում-վերաիմաստավորումով հանդերձ: Հմմտ., օրինակ, հայկական Դալլ-գետ, Ճորոխ, Մորատ³¹ գետանունների թյուրք. Քելիք, Չորուլս (Չորուհ), Մուրատ (Մուրաթ) ձևերը: «Թարգմանական» կայունության դրսևորման ժամանակ հին փոխարինելու եկած որևէ շրջանի նոր բնակչությունը գետն անվանակոչելիս (արդեն իր լեզվով) հաճախ ելնում է նրա այն նույն (ցայտուն) հատկանիշից, որը հին բնակչությանը ևս հիմք էր ծառայում նրա անվանակոչության համար: Սրանով, կարծես թե, նույն գետի հետին շրջանի անունը դառնում է նախորդի «թարգմանությունը», մեզ հնարավորություն ընձեռելով նրա օգնությամբ ստուգաբանելու նաև նախկին գետանունը³²: Հմմտ. օրինակ, հայկական Մեղ, Կարմիր-գետ, Քաղաձոր գետանունները թյուրք. Կարա-սու, Դրզըլ-չայ, Կարասու «թարգմանությունները»³³:

Այսինքն Արաքսի աջակողմյան վտակ Ղարասու (թյուրք. «Սև ջուր») գետի հին անունից: Արաք մատենագրության մեջ գետը հայտնի է եղել նաև տեղական Ծ, 𐎠𐎫𐎼𐎡𐎴 (<Իրան. Ծ, 𐎠𐎫𐎼𐎡𐎴, Kalan-rūd) անունով, որի մեջ բուն գետանվանը կցված է պարսկերեն Ծ, (rūd «գետ») բառը: Գետանվան ստուգաբանությունն ամբողջությամբ տալիս է Յակուտ ալ-Համավին, գրելով. «Նշանակում է մեծ գետ և գտնվում է Աղրբեջանում (Ատրպատականում—Ս. Պ.), ալ-Բադի մոտ, որը Բաբելի քաղաքն էր»³⁴: Սակայն արաք

30 «Արաքական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 15, 40:

31 Մորատ (<Մար-ատ) գետանվան առաջին բաղադրիչի համար հմմտ. Մուրցամօր, Մեծամօր, Խոզմօր գետանունների համապատասխան բաղադրիչները, իսկ կազմության և իմաստի տեսակետից հմմտ. Տզմուտ գետանունը:

32 В. Георгиев, նշվ. աշխ., էջ 115, 168, 253:

33 Թվարկված հայկական գետանուններից Մեղ-ը պետք է բխեցնել մուգ գույներ նշող հ.՝ Ե. *mel- արմատից (հմմտ. հռ.՝ μέλας «սև» բառը և Μελαι «Սև» գետանունները Բեռլ-տիայում, Թեսալիայում, Թրակիայում, Կապադովկիայում): Գետանվան այսպիսի իմաստը բխում է նաև այն կրած գետի այսօրվա Կարասու «Սև ջուր» հորջորջումից: Ներկորդ անվամբ հայտնի գետը այժմ կոչվում է Դրզըլ-չայ, այսինքն՝ դարձյալ «Կարմիր գետ» (կամ «Կարմիր գետակ»): Իսկ Քաղաձոր (Քալաձոր) գետանվան առաջին բաղադրիչը պետք է բխեցնել հ.՝ Ե. *kāl-, *kel- «սև, մոխրագույն» արմատից: Այս գետը ևս հիմա իր ստորին հոսանքում կոչվում է Կարասու («Սև ջուր»):

34 Տե՛ս «Արաքական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 103: Այն անգամանքը, որ գետը հոսել է ալ-Բալ (=հայկ. Բալ) բնակավայրի մոտակայքով, ցույց է տալիս, որ խոսքն, իրոք, այժմյան Ղարասու գետի մասին է: Վերջինիս վերին և միջին

հեղինակը թյուրիմացության մեջ է: «Մեծ», «վիթխարի» և այլն նշանակում է պարսկերեն 𐭪𐭫𐭮𐭭 բառը³⁵, որը, ի տարբերություն մեր գետանվան 𐭪𐭫𐭮𐭭 բաղադրիչի, առաջին վանկում ունի կարճ *a* (*kalān*), ուրեմն և տարբեր ծագում:

Հաշվի առնելով նույն գետի ներկա Ղարասու անվան «Սև ջուր» իմաստը, Քալան-ռուղ գետանվան առաջին Քալան բաղադրիչը կարելի է բխեցնել հ.՝-ե. **kal-*, **kel-* («սև, մոխրագույն») արմատից: Հմմտ. հին հնդկ. *kālas* «սևամոխրագույն», *kalana* «բիծ, կեղտ», հուն. *καλόν* «սև» (*Hesych.*), *καλός* «սև օր», *καλός* «բիծ», սլավոն. լեզուների **kalъ* արմատից սերած բառերը (նաև «կեղտ, տիղմ, ճահիճ» իմաստներով), հայ. կեղտ, խաղ «ճահիճ» և այլն³⁶, Հնագույն հայերենում այս արմատն ունենալու էր իր **ʔ*աղ = **ʔ*ալ տարբերակները՝ պահպանված Քաղածոր (Քալածոր) գետանվան և Քաղաղալ (Քաղածոր) տեղանվան մեջ: Հնում Քաղածոր կոչված Թուրիան-չալ գետը³⁷ իր ստորին սահանքում, այսինքն՝ հին Քաղաղալտ գավառի սահմաններում, այժմ կրում է Կարասու (թյուրք. «Սև ջուր») անունը³⁸: Սա ցույց է տալիս, որ Քաղածոր = Կարասու (Թուրիան-չալ) գետի շրջակայքի լին՝ հին, թե՛ նոր բնակչությունը գետն անվանակոչելիս աչքի առաջ ունեցել է նրա ցալտուն հատկանիշը՝ ջրերի մոթ գույնը: Իսկ Քալան-ի -ան մասնիկը կարելի է մի կողմից համեմատել հին հնդկ. *kalana* և հուն. *καλόν* բառերի համապատասխան մասերի հետ, մյուս կողմից՝ թրակերենի -an = -en ածականակերտ վերջածանցի³⁹ հետ միասին բխեցնել միևնույն հիմքից: Այս դեպքում, Քալան-ռուղ գետանունն ամբողջությամբ նշանակելու է կամ «Սև գետ»՝ ներկայացնելով երկվորյակը գետի ներկայիս Ղարասու անվան, կամ «Կեղտոտ գետ» = «Տղմոտ գետ» (հմմտ. Տղմոտ գետանունը)՝ ներկայացնելով նրա իմաստային գույահները:

Քալան-ռուղ գետանվան վերի ստուգաբանությունը համոզիչ է դառնում նաև այս գետից արևմուտք, նրան զուգահեռ ընթացող (և դարձյալ հարավից Սրաքսո թափվող) գետակի Սելեն (Սելին, Սելեն-չալ)⁴⁰ անվան ստուգաբանության օգնությամբ: Այս երկու հարևան գետերի անունները կազմում են մի նակադրամիասնություն, քանի որ վերջին գետանունն իր հիմքում ունի «լուսավոր», «պայծառ», «փայլուն» և նման արիչ իմաստներ պարունակող մի բառ: Մեր կարծիքով, Սելեն գետանվան *սել- արմատը ծագում է հ.՝-ե. **suel-*ից, որից են նաև պելասգ. *σεῖν* «լույս, փայլ, բոց», հուն. *εἶλη*, *εἶλη* «արևի ցոլք», «արևի տաս», հին հնդկ. *svaratī* «փայլել, ցոլալ, այրվել»,

հոսանքների աչափնակն էր բռնում Բաղ գավառը (տե՛ս Ա. Տ. Երեմյան, «Հայաստանը և Խորհան Երկրները 855—953 թթ.» քարտեզը, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. III):

³⁵ «Персидско-русский словарь», т. II, М., 1970, էջ 338:

³⁶ *SL*՝ *М. Фасмер*, Этимологический словарь русского языка, т. II, М., 1967, էջ 163, 168; Г. Б. Джайукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, էջ 109, 143, 201:

³⁷ Ա. Տ. Երեմյան, Հայաստանը բառ «Աշխարհացոյց»-ի, էջ 89:

³⁸ Երբեմն Կարասու կոչվում է գետն ամբողջությամբ (տե՛ս «Народы Кавказа» («Народы мира. Этнографические очерки»), т. II, М., 1962, էջ 38-ի քարտեզը):

³⁹ *SL*՝ *В. Георгиев*, նշվ. աշխ., էջ 115:

⁴⁰ *SL*՝ «Արաքս գետի ավազանը» քարտեզը («Հայկական սովետական հանրագիտարան», հատ. I, Երևան, 1974, էջ 702), Թյուրք. չալ («գետակ», «վտակ»), բաղադրիչը ուշ շրջանի հավելում է:

անգլոսաքս. swelan «հուրհրատող առարկա» և հ.-ե. մյուս լեզուների համադասարարական բառերը⁴¹։ Ինչպես տեսնում ենք, մեր գետանվան Սել-արմատը հնչյունաբանորեն բացարձակապես նույնն է պելասգերեն համադասարարական արմատի հետ, իսկ նրան կցված -են մասնիկը, հավանաբար, նույնն է թրակերեն համադասարարական (-en = -an) ածականակերտ վերջածանցի հետ⁴²։ Այս գետը Սելեն էր կոչվելու շնորհիվ իր ջրերի հստակության (նրա ակունքները գտնվում են Հաշտասար լեռան հյուսիսային լանջերին) և ի հակադրություն հարևան 'Արասու գետի հին Քալան (Քալան-ոուդ՝ «Սև գետ» կամ «Կեղտոտ-տղմոտ գետ») անվան՝ վերջինիս տրված իր մութ-պղտոր ջրերի պատճառով։

Համառոտակի անդրադառնանք նաև Հալմոս գետանվանը։ Պլուտարքոսի բերած մի հին ավանդության համաձայն, հայոց Արաքս թագավորի երկու դուստրը սպանվում են նրա մեծատոհմիկներից մեկի կողմից։ «Իմանալով այդ մասին, Արաքս թագավորը նետվում է Հալմոս գետը, որն այնուհետև նրա անունով կոչվում է Արաքս»⁴³։ Ավանդությունից պարզվում է, որ Արաքս գետը (կամ, ավելի հավանական է, նրա մի մասը) ժամանակին կրել է Հալմոս (հուն. 'Αλμος) անունը⁴⁴։ Քանի որ Արաքսի վերին հոսանքը հնում կոչվել է Փասիս (հուն. Φασίς)⁴⁵, իսկ միջին հոսանքը Երասիս⁴⁶ (նաև Ռաֆի)⁴⁷, ուստի պետք է ենթադրել, որ նա Հալմոս է կոչվել իր ստորին հոսանքում միայն։ Եթե այդպես է, ապա այս անունը նրան պետք է տված լինեին այս կողմերում բնակված թրակա-կիմերական ցեղերը։ Հնում 'Αλμος էին կոչվում Դանուբի բուլղարական վտակներից երկուսը։ Ըստ Վ. Դեորգիևի, թրակյան այս գետանունների հիմքում ընկած է հ.-ե. *olmo-s նախածեր (հ.-ե. o > թրակ. a)⁴⁸։ Հմմտ. լատին. ulmus, հին սկանդ. almr անգլ. elm, ռուս. илем, ильм «ծփի, կնձնի, թեղի» և գերմ. Alma, Almaha, Elmaha, Elm, ռուս. Елемка գետանունները⁴⁹։ Արաքսի ստորին հոսանքի շրջանում բնակված թրակա-կիմերական ցեղերը գետն 'Αλμος կարող էին կոչել կամ նրա ափերին աճած թեղիների⁵⁰, ծփիների պատճառով, կամ ի հիշատակ իրենց հին հայրենիքի նույնանուն գետերից մեկի։

41 Sélus B. Георгиев, նշվ. աշխ., էջ 93։ Հմմտ. նաև հունա-պելասգ Յεληνική «լուսին» (> Σελήνη «Սելենե»՝ լուսնի դիցուհին), Յελατή—γελεινός «լուսածին» (Ապոլոնի մականունը), Յελας—φάρις «ցոլացող», «լուսարեր» և այլն։

42 B. Георгиев, նշվ. աշխ., էջ 115։

43 Ս. Բ. Դանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 87։

44 «Древнегреческо-русский словарь», т. I, М., 1958, էջ 86։

45 Xen., Anabasis, IV, VI, 4—5։

46 Երևանացի, Ա. Ժր։ Դա երևում է նաև Արշարունիք և Գաբիլյանք արաքսամերձ գաղառների Երասիսաձոր անվանումից (Ս. Ն. Երևանյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 40)։

47 Կորյուն, գլ. Թ։

48 B. Георгиев, նշվ. աշխ., էջ 262։

49 Նույն տեղում։ М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. II, էջ 126—127։

50 Եթե միայն Հալմոս ('Αλμος) գետանվան հիմքում ընկած չէ հ.-ե. *salm- բառը՝ հայերենին, լուսարենին, իրանական լեզուներին բնորոշ հ.-ե. նախածայն s > h անցմամբ։ Հմմտ. նրանից ծագած հուն. ἄλμη «աղի ջուր, ծովի ջուր», ἄλμαρις «աղի» բառերը՝ թրակ. Salmorude, *Salmuris, Σαλμορις գետանունների ու աշխարհագրական անվանումների համադասարարական բաղադրիչների կողքին (B. Георгиев, նշվ. աշխ., էջ 122, 133)։

Գետանունների նման համեմատական երկարակեցությամբ են օժտված նաև աշխարհագրական միուս օբյեկտների, հատկապես մեծ լեռների, անունները: Խնդրո առարկա շրջանի հարավային սահմանի վրա հառնում է Սաւլաւանը (Սաւալան, Սաբալան)⁵¹ Ատրպատականի ամենաբարձր (4821 մ) լեռը⁵²: Նրա անունը ևս ունի հնդեվրոպական, ամենայն հավանականությամբ դարձյալ թրակա-կիմերական, ծագում: Մեր կարծիքով, Սաւալան (<*Սաւալ-ան) լեռնանվան հիմքում ընկած է հ.-ե. *sauel- արմատը, որից սերում են ազգակից լեզուներում լուսատուներ նշող մի շարք բառեր: Հմմտ. հուն. σάουλος = *αFεῖλος, ἄλος, հոմեր. ἄειλος, դոր. αἰλος (<հ.-ե. *savel) «արև, արևի լույս», լատին. sōl «արև», հին հնդկ. svar-, վեդ. súvar «արև, լույս, երկինք», ավեստ. hvarə «արև, արևի լույս», ալբան. hyll, yll (<*söl) «աստղ», կիմր. haul, գոթ. saul, լիտվ. saulė, լատիշ. saule, ռուս. со́лнце «արև» և այլն⁵³: Լեռնանվան երկրորդ -ան բաղադրիչը, ըստ երևույթին, ըրակերենի վերոհիշյալ -an = -en ածականակերտ վերջածանցն է, ինչպես վերևում տեսանք, առկա նաև Քալան (Քալան-ոուդ) և Սելեն (Սելեն-շայ) գետանունների մեջ: Ուրեմն, հնարավոր է, որ Սաւալան <*Սաւալ-ան <*sauel-an, այսինքն՝ «լուսավոր, լուսե» (մանավանդ որ սրբազան համարված այս լեռան գագաթը պատված է հավերժական ձյունով):

Թերևս, թրակա-կիմերական ծագում պետք է վերագրել նաև Սաւալաթի լեռնանցքի անվանը և նրա սկզբնաղբյուր տեղանվանը: Վերևում տեսանք, որ այս լեռնանցքը ևս գտնվում էր թրակա-կիմերական ցեղերի հսկողության տակ՝ Փուլուադի (հետագա Կատիշք) երկրի հյուսիսում, Բալական-Արդաբիլ ճանապարհի վրա: Հների ավանդած «Կասպիական» անունը, ըստ երևույթին, լեռնանցքի տեղական անունը չէ («Կասպիական» էին կոչվում այժմյան Դաբիալի, Դերբենդի և Ռելի լեռնանցքները ևս)⁵⁴: Մեր կարծիքով, լեռնանցքի և կից բնակավայրի Սաւալար անունը պետք է կապ ունենա պելասգերեն σάλας «անցք, բացվածք» բառի հետ⁵⁵, որը նույն լեզվից հունարենին անցած σάλας «փայլ» և σάλας «լուսին» բառերի հետ միասին բխեցվում է

51 Լեռնանվան Սաբալան (سابلان, sabalān) տարբերակը եթե արաբական միջնորդությամբ հետևանք չէ (արաբերենը Ա հնչյուն և տառ չունենալու պատճառով դրանց դիմաց դնում էր իր Ե-ն), ապա առաջանալու էր պարսկերենի հոդի վրա, վերջինիս մեջ տեղի ունեցած >b օրինաչափ անցման հետևանքով (հմմտ. vāt > bād, سار «բամբ», vārān > bārān, باران «անձրև», Taḡrīz > Tabriz تبریز և այլն):

52 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 79:

53 Տե՛ս Մ. Фасмер, Этимологический словарь русского языка, т. III, М., 1971, էջ 710—711:

54 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, էջ 36, 53, 717, 809: Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանությունը բնագրից, առաջարան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 22—23, 28:

55 Սաւալար տեղանունը այժմ զուգորդվում է արաբերեն: سلاوة (>պալս. salavāt, ժամանակակից արտասանությամբ՝ salavat) բառի հետ, որն ունի ա. «աղոթքներ» (հոդանակին է سلاوة, salāt «աղոթք» բառի), բ. «[աստծու] ողորմածություն» և վերջինիցս բխող ուրիշ իմաստներ (տե՛ս «Перендеко-русский словарь», т. II, էջ 139): Սակայն այսպիսի իմաստներ պարունակող բառը զովար թե տեղանվանական կիրառություն ստանալու

հ.-ե. *suel-, *sel- («վառվել») արմատից⁵⁶: Հավանաբար, բուն պելասգերենում այս բառը հնչել է *salauā, քանի որ հունարեն փոխառյալ բառերի β-ն հաճախ արտացոլում է փոխատու լեզվի υ-ն, իսկ հուն. γ=δ: Եթե *salauā բառը, իսկապես, դոյություն է ունեցել նաև թրակա-կիմերական լեզուներում, ապա պետք է ենթադրել, որ լեռնանցքին կից բնակավայրի անվան մեջ նրան կցվել է -at տեղանվանակերտ վերջածանցը (հմմտ. մի կողմից Pu-lu-adu, մյուս կողմից -աու տեղանվանակերտ վերջածանցով կազմված հին հայկական տեղանունները):

Սալավաթի լեռնանցքի և նրան կից բնակավայրի անվանը տրված ստուգաբանության ճշմարտացիության մասին է խոսում ներքոշարադրյալը ևս: Հին հույները գիտեին, որ «սկյուրներից փրկություն որոնելով, Ասիայում կիմերները բնակություն են հաստատում այն թերակղզում, որտեղ այժմ գտնվում է Սինուս քաղաքը»⁵⁷: Վերոշարադրյալի և կիմերների Սինուսի թերակղզում ունեցած բնակության տեսակետից ուշագրավ է այստեղ, Կարասու պետակի ափին գտնվող Սալավաթ բնակավայրի անունը⁵⁸: Ըստ երևույթին, այստեղ գոյություն է ունեցել գետանցք (*salauā), որի մոտ կառուցված բնակավայրը կոչվել է ճիշտ այնպես (salauāt), ինչպես «Կասպիական» լեռնանցքին կից բնակավայրը: Միայն այն տարբերությամբ, որ այստեղ *salauā «անցք, բացվածք» բառի տակ տեղի թրակա-կիմերական ցեղերը նկատի են առել գետանցք, իսկ այնտեղ լեռնանցքը (հմմտ. հայ. կիրճ բառի դույզ իմաստները՝ «նեղ անցք, թե՛ ջրի և թե՛ լեռների մեջ»⁵⁹):

Բերված աշխարհագրական անվանումների և տեղանունների (թեկուղև, միայն դրանց մի մասի) ստուգաբանությունները ցույց են տալիս, որ Արաքսի ստորին հոսանքի շրջանում, նրա աջակողմյան վտակ Ղարասու գետի ավազանը ներառյալ, ժամանակին բնակված հնդեվրոպական (բայց ոչ իրանական և ոչ հայկական) ցեղերի լեզվին (լեզուներին) հատուկ են եղել ինչպես բուն կիմերներին, այնպես էլ բուն թրակերներին և պելասգերներին բնորոշ օրինաչափություններ⁶⁰: Առաջին (կիմերներին) դեպքում դա դրսևորվում է

⁵⁶ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն և հնդեվրոպական հին լեզուները, էջ 91, 96—97:

⁵⁷ Herod., IV, 12.

⁵⁸ Ի դեպ, կիմերների այստեղ ունեցած բնակության փաստից ելնելով պետք է ստուգաբանել Սինուս (հուն. Σινωπη = Sin-ōpā) տեղանունը: Նրա առաջին՝ sin- բաղադրիչը պետք է բխեցնել հ.-ե. *kʷi-no- նախածից (<հ.-ե. *kʷei- գույնանիշ արմատ) և առնչել ոուս. синои, եկեղ. սյալ. синь «կապտավուն», «սև, խավար, մթին», լիտվ. šemas, semas «մոխրագույն», հին հնդկ. cyaṁas «սև, մթին» բառերին (տե՛ս М. Фасмер, նշվ. աշխ., т. III, М., 1971, էջ 624): Տեղանվան երկրորդ -ōpā բաղադրիչի հիմքում կարելի է տեսնել հ.-ե. *ur- «ջուր» արմատը, որից են սերում լիտվ. ūpe «գետ, հոսանք», լատիշ. upe «ջուր», բրակ. ura «գետ» բառերը (հմմտ. նաև թրակ. Αἰ-ῶπα տեղանունը և Ὑπριος = Hyprius գետանունը. տե՛ս Де́рев, նշվ. աշխ., էջ 41: В. Георгиев, նշվ. աշխ., էջ 123, 254): Ի հաստատումն Σινωπη տեղանվան այսպիսի ստուգաբանության, նշենք, որ Սինուս նախնականգատային քաղաքը գտնվում է Սև ծովը թափվող Կարասու (հին ժամանակներում պետք է կոչվեր *Sinōpā) գետակի գետաբերանից ոչ հեռու, իսկ թյուրք. կարա-սու նշանակում է «Սև ջուր», այսինքն՝ *Sin-ōpa:

⁵⁹ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. II, Երևան, 1973, էջ 595:

⁶⁰ Թրակերների և պելասգերների մերձավորությունը հասնում է բարբառային ընդհանրության աստիճանի (В. Георгиев, նշվ. աշխ., էջ 281: Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն և հնդեվրոպական հին լեզուները, էջ 49): Իսկ կիմերների և պելասգերների էթնիկական

միևնույն տեղանունների զույգ՝ 1-ով և 1-ով, տարբերակների մեջ. Փայտակաւան և *Փայլակաւան (>*Բայլակարան>Բայլական), Արտաւէտ և *Արտաւէլ (>Արտավիլ>Արդաբիլ): Երկրորդ (թրակա-պելասգյան լեզուների) դեպքում դա դրսևորվում է հատկապես այստեղ, ի տարբերություն հունարենի, հայերենի և իրանական լեզուների, հ.-ե. նախաձայն s-ի պահպանման մեջ. Սելեն (<հ.-ե. *suel-), Սաւալան (<հ.-ե. *sauel-), Սալավար (հմմտ. պելասգ. $\sigma\alpha\lambda\alpha\rho$ < հ.-ե. *suel-):⁶¹

Հենվելով վերոբերյալ ստուգաբանությունների վրա, կարող ենք պնդել, որ Արաքսի ստորին հոսանքի շրջանում դեռևս մ. թ. ա. VIII դարում (և հավանաբար, դրանից էլ առաջ) բնակված թրակա-կիմերական էթնիկական տարրը այստեղ գոյատևել էր նաև հետագա դարերում՝ իր գոյության վկայությունը լիզնելով ի դեմս արևելյան Անդրկովկասի և հյուսիսային Ատրպատականի մի շարք տեղանունների և աշխարհագրական անվանումների: Կիմերներից և տրերներից բացի, ինչպես պարզվում է Ստրաբոնի հաղորդած տեղեկություններից, այս կողմերում բնակվելիս են եղել նաև «այնիանների», «սարապարների» և «ինչ-որ թրակացիների» առանձին հատվածներ⁶²: Դրանք բոլորը հետագայում ձուլվել են մասամբ հալ ժողովրդի արևելաանդրկովկասյան հատվածի, մասամբ էլ հյուսիսային Ատրպատականի մարերի մեջ: Թե՛ այս կողմերում և թե՛ Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում հաստատված թրակա-կիմերական (և ընդհանրապես՝ հինթրակյան) ցեղերը ակտիվ մասնակցություն են հանդես բերել հալ ժողովրդի կազմավորման պրոցեսին: Հայտնի է, օրինակ, որ հայերենում գոյություն ունի պելասգերենին, թրակա-կիմերենին և դակերենին մոտ մի լեզվաշերտ⁶³: Անտարակույս, դրսևորությունը մասամբ էլ (եթե ոչ հիմնականում) պայմանավորված է պելասգերենին, թրակացիներին, դակերենին մոտ ազգակից էթնիկական տարրերի՝ հայության էթնոգենեզիսին բերած մասնակցությամբ:

Արաքսի ստորին հոսանքի շրջանի, նրա աջակողմյան վտակ Ղարասու գետի ավազանը ներառյալ, թրակա-կիմերական ցեղերի հայության էթնոգենեզիսին բերած մասնակցության տեսակետից խիստ ուշագրավ են արաբ մատենագիրների հաղորդումները Բայլական (Փայտակարան) և Արդաբիլ

մերձավորության տեղանկյունից հետաքրքրական է, որ Դիոնիսիոս Եգիպտացի (մ. թ. II դար) հյուսիսային Կովկասի արևմտյան ծովափի ցեղերին, դրանց թվում և կիմերներին, կոչում է «Պելասգյան երկրի ղափակներ» ($\sigma\alpha\lambda\alpha\kappa\alpha\iota\epsilon\gamma\epsilon\iota\sigma\alpha\iota$), տե՛ս В. В. Латышев, Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, т. I, Греческие писатели, СПб., 1900, էջ 184—185:

⁶¹ Ըստ երևույթին, այս լեզվում (լեզուներում) ևս, թրակերենի նման, գոյություն է ունեցել -an--on ածականակերտ վերջածանցը. Քալան (<*Քալ-ան), Սելեն (<*Սել-են), Սաւալան (<*Սաւալ-ան): Բացահայտվող մյուս օրինաչափությունները, որոնք հենվում են մեկերկու կասկածելի օրինակների վրա, վստահելի չեն: Թրակերենի և պելասգերենի նման, հ.-ե. p>ph (փ). Πισ- < և Փայտակաւան. Puluadi=Փուլուադի (հմմտ. հայ. փող): Թրակերենի և փոյուգերենի նման, այստեղ ևս գործել է b=pi հնչյունափոխությունը. Գարար (Գարառ)=Gamer (?):

⁶² Strabo, XI, 5, 2; XI, 7, 1; XI, 14, 14.

⁶³ Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 96—97: Նույնի՝ Հայաստանի լեզվի հինանատոլիական ծագման վարկածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 108: В. Георгиев, նշվ. աշխ., էջ 143: Զոն Ա. Կ. Գրեպին, Դասական հայերենի ղափակների փոխառյալ տարրերի ուսումնասիրության փորձ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1976, № 4, էջ 77:

(Արտավեստ) քաղաքների հիմնադիրների վերաբերյալ⁶⁴, Այդ հաղորդումների հիմքում ընկած տեղական ավանդադրույցների համաձայն, թե՛ Բալլական, թե՛ Արդաբիլ քաղաքների էպոնիմ-հիմնադիրները (ասել է, այդ քաղաքների և նրանց նախնական բնակիչների հավաքական կերպարների բանահյուսական անձնավորումները) որդիներն էին Արմինիի՝ հայերի ընդհանուր էպոնիմ-նախնու՝ Վերջինս համապատասխանում է հայկական ավանդադրույցների Հայկին⁶⁵ և Արմին է կոչված օտարների կողմից հայերին տրվող արմեն (արաբ. արմին, պարս. արման) անվան ազդեցությամբ⁶⁶:

Թրակա-կիմերական ցեղերի ընդհանրապես, և Արաքսի ստորին հոսանքի շրջանի թրակա-կիմերական ցեղերի մասնավորապես, հայ ժողովրդի էթնոգենեզիսին բերած մասնակցության տեսակետից ուշագրավ են ինչպես հայ պատմագրության ավանդական-պաշտոնական տեսակետը, այնպես էլ պաշտոնական ճանաչման չարժանացած տեղական ավանդադրույցներում բացահայտվող մոտեցումը: Համաձայն առաջինի, համայն հայության էպոնիմ-նախնի (էթնարխ) Հայկը թողն էր կամ Գամերի (Գոմերի)⁶⁷, կամ նրա որդի (ըստ Աստվածաշնչի՝ Լոբայր) Թիրասի⁶⁸: Սրանցից Գամերը կիմերների էպոնիմն է, իսկ Թիրասը՝ թրակացիների⁶⁹: Քանի որ Փայտակարան = Բալլական և Արտավեստ = Արդաբիլ քաղաքանունների գույգ տարբերակների մեջ դրսևվորվում է լեզվական այնպիսի մի օրինաչափություն, ինչպիսին կիմերներինից հկող է = 1 հնչյունական համապատասխանությունն է, ուստի այս քաղաքների նախնական բնակիչները, պետք է ենթադրել, ունենալու էին կիմերական (կամ, առնվազն, կիմերներին մոտ) ծագում: Ուրեմն, այս քաղաքների և սրանց նախնական բնակիչների էպոնիմները՝ հանձինս Բալլականի և Արդաբիլի, պետք է նախապես համարվեին ոչ թե Արմինիի (հայկ), այլ թրակա-կիմերների էպոնիմ-նախնու որդիները: Նույն կերպ Բարդաան՝ էպոնիմ-հիմնադիրը Բարդաա (Պարտաու) քաղաքի և էպոնիմ-նախնին նրա նախնական բնակչության, պետք է որ հետագայում դարձած լինի Արմինիի (Հայկ) որդին⁷⁰: Արմինին, այս դեպքում ևս փոխարինելու էր թրակա-կիմերական ինչ-որ ցեղի (տրերների)⁷¹ էպոնիմին:

⁶⁴ Այս առումով հետաքրքիր է նաև Ատրաբոնի այն հաղորդումը, համաձայն որի՝ Կասպից ծովից հարավ-արևմուտք տարածված և Հայկական ու Մարական կոչված լեռների «...լանջերն ի վեր, ծովից մինչև քարձուրները, ոչ մեծ տարածության վրա բնակվում են քիչ թվով աղվաններ ու հայեր, և ավելի շատ գելեր, կատիչներ, ամարգներ, ուխտիներ ու անարիակներ» (Strabo, XI, 7, 1):

⁶⁵ Տե՛ս Ա. Н. Тер-Гевондян, Армения и Арабский халифат. Ереван, 1977, էջ 258:

⁶⁶ Հմմտ. հայերի ծագումը բացատրող ավանդադրույցներից մեկի հին հունական տարբերակում՝ հայերի էպոնիմ-նախնու կրած Արմենոս անունը (տե՛ս Strabo, XI, 4, 8, XI, 14, 12):

⁶⁷ Հայկի հայր Թորգոմը (Թորգոմա), ըստ Աստվածաշնչի. Գամերի որդին էր (տե՛ս Մենդր, գլ. Ա, 3 և Ա Մնաց. գլ. Ա, 6—7):

⁶⁸ Այս վերջին կարծիքի հեղինակը խորենացին է, կամ նրա աղբյուրը (տե՛ս Խորենացի, Ա, 6, Ա, Խ):

⁶⁹ Jos. Flav., Antiq. Jud., I, 125; Մոյսես Կաղան՝ յատվացի. Ա, Բ:

⁷⁰ Հստ. Գիմաշկիի (տե՛ս Ա. Н. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 258):

⁷¹ Տրերների թրակական ծագման փաստը իր ուղղակի արտացոլումն է գտել Թուկիդիդեսի մի հաղորդման մեջ (Thuchyd., Hist., II, 96, 4) և ընդունվում է մասնական կից բոլոր ուսումնասիրողների կողմից: Պարտավը գտնվում էր Տրտու գետի ափին, նրա ստորին հո-

Այսպիսով, պարզվում է, որ թրակա-կիմերական էթնիկական տարրի հայ ժողովրդի էթնոգենեզիսին բերած մասնակցության իրողությունը հայ իրականության մեջ տեսականորեն հիմնավորվել է երկու կերպ. մի գեպքում համայն հայության էպոնիմ-նախնի (էթնարխ) Հայկը «որդեգրվել» է աստվածաշնչային Թորգոմի (Թորգոմա) կողմից՝ դրանով իսկ դառնալով իրակա-կիմերական ցեղերի էպոնիմներ Գամերի (Գոմեր) կամ Թիրասի թուր (այս առաջին դիրքորոշումն է արտացոլում հայ պատմագրության ավանդական-պաշտոնական տեսակետը)⁷², մյուս դեպքում՝ Հայկն ինքն է «որդեգրել» արեելյան Անդրկովկասի և հյուսիսային Ատրպատականի թրակա-կիմերական էթնիկական տարրի առանձին հատվածների էպոնիմներին՝ դրանով իսկ դառնալով Փայտակարան, Արտավեստ և Պարտավ քաղաքների էպոնիմ-հիմնադիրների հայրը (այս երկրորդ դիրքորոշումն է արտացոլում տեղական ավանդադրույցների վրա հենվող, պաշտոնական-համահայկական ճանաչում չգտած, բայց արաբ մատենագիրների շնորհիվ մեղ հասած, տեսակետը)։

ФРАКО-КИММЕРИЙСКИЙ ЭТНИЧЕСКИЙ ЭЛЕМЕНТ В РАЙОНЕ НИЖНЕГО ТЕЧЕНИЯ АРАКСА

С. Г. ПЕТРОСЯН

(Резюме)

О пребывании фрако-киммерийских племен в сопредельных районах Армянского нагорья, Восточного Закавказья и Северо-западного Ирана говорят не только письменные источники, но также данные топонимии. Урартские надписи на севере античной Атропатены, южнее «Армянского» (в горах Карадага) и «Каспийского» (ныне Салаватского) проходов, упоминают страну *Пулуади*. Вероятно, это страна *пулийцев* — союзников киммерийцев. Первый компонент (*pu*u-) этих имен, возможно, родственен как арм. *փող* (род. п. *փողոյ*) «узкий проход, переулок, коридор» и т. п., так и греч. *πύλη*, «ворота, врата», «вход, проход» и пеласг.-греч. *φύλαξ* — «страж, караульный, привратник».

В вариантных парах топонимов *Փայտակարան* = *Baylakan* и *Արտավեստ* = *Arđabil* налицо фонетическое соответствие *t* = *l*, истоки которого находятся в языке киммерийцев (ср. имя вождя киммерийцев: аккад. *Tugdamti* = греч. *Λυγδαμης*). Это указывает на то, что районы

սանքի շրջանում, իսկ նրանից արեմուտը, նույն գետի միջին հոսանքի շրջանն էր բռնում Տոխ գաղաթը։ Ամենայն հավանականությամբ, թե՛ Պարտավ, թե՛ Տրոնու, թե՛ Տոխ անունները ունեն իրական (տրեբակա՞ն) ծագում, իսկ վերջին երկուսը ուղղակի կապ ունեն տրեբների ցեղանվան հետ (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ռուսարտուի ու Ասորեստանի սլաշթարը քոչվորների դիմ, էջ 92։ նույնի՝ ն. Մաուր և Վ. Ղարի «Աշխարհացոյց»-ը հոգվածք։ Ս. Պետրոսյան, Հինթրակյան էթնիկական տարրը հնագույն Վանանդում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 8, էջ 38—39, ծան. 41)։

⁷² Հիշենք, որ հին հրեաների ջանքերով, նույնպիսի ճանապարհով, սկյութների էպոնիմ Աշքենազը (Ասքանազ) «որդեգրին» էր դարձել Գամերի՝ դրանով իսկ միջազգային-պաշտոնական ճանաչում տալով սկյութական Աշգուզ (Աշքենազ) ցեղամիության մեջ թրակա-կիմերական ցեղերի ընդգրկման իրողությունը։

Байлакана и Ардебиля первоначально были заселены либо киммерийцами, либо близкородственным им этническим элементом.

О длительном пребывании в этих местах фрако-киммерийского этнического элемента говорят гидронимы 'Αἰμός (ср. фрак. 'Αἰμός < и.-е. *olmo-s „вяз“), Khālan-rūd (< и.-е. *kal-, *kel- «черный, серый», ср. совр. тюркское название той же реки — *Кара-су* «Черная вода»), **Selen** (< и.-е. *suel-, ср. пеласг.-греч. σελας «свет, блеск, сияние» и т. д.) и ороним Saçalan (< и.-е. *sauel-, ср. греч. ἄελαις, дор. ἄελαις < *sauel- «солнце, солнечный свет» и т. д.). Вероятно, фрако-киммерийского происхождения также название Салаватского прохода (ср. пеласг.-греч. ἀλάβη «дымовое отверстие, проход»), данное ему по названию близлежащего населенного пункта. Может быть, оно родственно топониму *Салават* на Синопском полуострове, где, по Геродоту (IV, 12), поселилась другая часть киммерийцев.

Согласно свидетельствам арабских авторов, жители Байлакана, Ардебиля и Бардаа считали основателями своих городов одноименных сыновей Арминия—этнарха армян. Это, надо полагать, говорит об участии в этногенезе армян местного фрако-киммерийского этнического элемента, которое в местных преданиях отразилось в лице эпонимов указанных городов.